ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13/2024/Վ/Վ

ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 24 մարտի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի նկատմամբ 2024 թվականի հոկտեմբերի 18-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 13/2024/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1.1. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2024 թվականի հունիսի 28-ի «Արմլուր.էյէմ» լրատվական կայքի՝ «ՏԵՍԱՆՅՈՒԹ. Քաշքշուք, հայհոյանքներ՝ Նոյեմբերյանի համայնքապետարանում. համայնքապետը բռնություն է կիրառել» վերտառությամբ հրապարակումը (այսուհետ՝ հրապարակում)[1] 2024 թվականի հոկտեմբերի 18-ին կայացրել է Արսեն Աղաբաբյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 13/2024-Վ/Վ որոշումը (այսուհետ՝ Հարուցման որոշում):

1.2. Հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝

Նոյեմբերյանի համայնքապետարանի առաջատար մասնագետը դիմել է իրավապահներին և հայտնել, որ մոտ չորս օր է՝ աշխատավայրում իրեն չեն տրամադրում հաճախումների մատյանը, որպեսզի ստորագրի:

Նշված օրը ևս իրեն չեն տրամադրել մատյանը՝ հայտնելով, որ Նոյեմբերյանի համայնքապետ Արսեն Աղաբաբյանը արգելել է այն տրամադրել: Համայնքապետարանի աշխատակիցը սկսել է իր բջջային հեռախոսով տեսանկարահանել, սակայն այդ ժամանակ համայնքապետ Աղաբաբյանը դուրս է եկել իր աշխատասենյակից և բռնություն գործադրելով՝ խլել իր հեռախոսը և հայհոյել:

1.3. Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 9-ին Քննչական կոմիտեին ուղղված թիվ 01/2090-2024 գրությամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն առ այն, թե արդյո՞ք նկարագրված դեպքի առթիվ Քննչական կոմիտեում առկա է հարուցված վարույթ, եթե այո, ապա ի՞նչ հիմքով է հարուցվել համապատասխան վարույթը, ի՞նչ փուլում է այն գտնվում, արդյո՞ք հրապարակման հիման վրա նախաձեռնվել կամ իրականացվում են այլ գործընթացներ:

1.4. Հանձնաժողովի՝ 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 01/2090-2024 գրությանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 01/06/218565-2024 գրությամբ նշվել է, որ 2024 թվականի հունիսի 19-ին Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակից Ս.Ա.-ի կողմից ներկայացված հանցանքի մասին հաղորդման հիմքով նույն օրը ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 2-րդ մասով

[1] Հասանելի՝ https://armlur.am/1380343/

նախատեսված հանցանքի (ինքնիրավչությունը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ և կատարվում է նախաքննություն:

1.5. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 4-րդ մասով ու «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ հրապարակմամբ նկարագրված ենթադրյալ արարքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ, 2024 թվականի հոկտեմբերի 18-ին կայացրել է Վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ 2024 թվականի հոկտեմբերի 18-ին հարուցված թիվ 13/2024/Վ/Վ վարույթը կասեցնելու մասին թիվ 13/2024/Վ/Վ-1 որոշումը (այսուհետ՝ Կասեցման որոշում): Հանձնաժողովի՝ 2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 01/3340-2024 գրությամբ Հարուցման և Կասեցման որոշումներն ուղարկվել են Գլխավոր դատախազություն և Քննչական կոմիտե՝ խնդրելով քրեական վարույթի շրջանակում կայացվելիք վարութային ակտերը տրամադրել Հանձնաժողովին՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ կասեցված վարույթը վերսկսելու նպատակով:

1.6. Հանձնաժողովը 2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 01/3319-2024 գրությամբ Հարուցման և Կասեցման որոշումները փոստային ծառայության միջոցով ուղարկել է Արսեն Աղաբաբյանին: Նշված գրությունն Արսեն Աղաբաբյանը ստացել է 2024 թվականի հոկտեմբերի 24-ին (հիմք՝ AL0124989491AM փոստային անդորրագիր):

1.7. 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Հանձնաժողով է մուտքագրվել Տավուշի մարզի դատախազի թիվ 67/5883-24 գրությունը, որով ներկայացվել են Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ի՝ քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշումը, ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի՝ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը, ինչպես նաև Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի

դեկտեմբերի 18-ի միջնորդագիրը՝ հասցեագրված ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանուն:

1.8. Առաջնորդվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունել է 2024 թվականի հոկտեմբերի 18-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 13/2024/ՎՎ վարույթը վերսկսելու մասին թիվ 13/2024/ՎՎ-2 որոշումը:

1.9. Հանձնաժողովը փոստային ծառայության և էլեկտրոնային փոստի միջոցով առաքված՝ 2025 թվականի մարտի 4-ի թիվ 01/920-2025 գրությամբ Ա.Աղաբաբյանից պահանջել է ներկայացնել թիվ 13/2024/ՎՎ վարույթի շրջանակներում քննարկվող դեպքի վերաբերյալ գրավոր պարզաբանում՝ դրան կցելով փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: 2025 թվականի մարտի 7-ին Ա.Աղաբաբյանն էլեկտրոնային փոստի միջոցով հաստատել է գրության ստացումը, սակայն վարույթի շրջանակներում պարզաբանում չի ներկայացրել:

1.10. Հանձնաժողովը փոստային ծառայության միջոցով 2025 թվականի մարտի 4-ի թիվ 01/944-2025 գրությամբ խնդրել է Ս.Ա.-ին հայտնել՝ արդյոք 2024 թվականի հունիսի 19-ին ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Ա.Աղաբաբյանի կողմից նրա նկատմամբ գործադրվել է բռնություն և Ա.Աղաբաբյանը վերցրել է նրա հեռախոսը՝ ներկայացնելով դեպքի մանրամասներ և դրանք հավաստող նյութեր: Ս.Ա.-ն նշված գրությունը ստացել է 2024 թվականի մարտի 7-ին (հիմք՝ AL0126896137AM փոստային անդորրագիր), սակայն գրության պատասխան չի ներկայացրել:

1.11. Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 4-ի թիվ 01/928-2025 գրությամբ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարից պահանջել է հայտնել՝ արդյոք ՀՀ դատախազության Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ի միջնորդագրի կապակցությամբ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանու կողմից ձեռնարկվել են գործողություններ: Նշված գրությանն ի պատասխան՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 5-ի թիվ Ե-01/476 գրությամբ նշվել է, որ ՀՀ դատախազության Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ի միջնորդագրում

նկարագրված դեպքի հանգամանքները ներկայացվել են ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանուն, որն ավագանու կողմից ընդունվել է ի գիտություն:

1.12. Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 4-ի թիվ 01/913-2025 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազից պահանջել է տրամադրել քրեական վարույթի նյութերը: Նշված գրությանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը 2025 թվականի մարտի 14-ի թիվ 02/20.5/5303-2025 գրությամբ հայտնել է, որ քրեական վարույթի նյութերը Հանձնաժողովը կարող է հայցել նախաքննության մարմնից:

1.13. 2025 թվականի մարտի 5-ին Հանձնաժողով է մուտքագրվել ՀՀ դատախազության Տավուշի մարզի դատախազի թիվ 67/937-25 գրությունը՝ ի լրումն 2024 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 67/5883-24 գրության, որով Հանձնաժողովին է ներկայացվել հսկող դատախազի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ին ներկայացված միջնորդագրի վերաբերյալ Նոյեմբերյանի համայնքապետարանից ստացված պատասխանը:

1.14. Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 17-ի՝ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետին հասցեագրված թիվ 01/1107-2025 գրությամբ պահանջել է ներկայացնել քրեական վարույթի նյութերը:

1.15. Ի պատասխան Հանձնաժողովի՝ 2025 թվականի մարտի 17-ի թիվ 01/1107-2025 գրության՝ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի՝ 2025 թվականի մարտի 18-ի թիվ 55/94886-2025 գրությամբ ներկայացվել է քրեական վարույթի նյութերի թվայնացված տարբերակը, իսկ 2025 թվականի մարտի 24-ին հատուկ փոստային ծառայության միջոցով Հանձնաժողովում ստացվել է քրեական վարույթի շրջանակներում Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների հիշողության կոշտ կրիչում զննում կատարելու և վարույթի համար նշանակություն ունեցող տեսանկարահանումները այլ կրիչի վրա պատճենելու մասին 2024 թվականի հուլիսի 26-ի արձանագրությանը կից լազերային սկավառակը:

II. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

2.1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանու՝ 2021 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2-Ա որոշմամբ Արսեն Աղաբաբյանն ընտրվել է Նոյեմբերյան համայնքի ղեկավար և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2. Քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

2.2.1. 2024 թվականի հունիսի 19-ին Ս.Ա.-ն ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի որոշմամբ ճանաչվել է տուժող և նույն օրը տվել է հետևյալ ցուցմունքը.

« (...) Տևական ժամանակ իմ քաղաքական և քաղաքացիական հայացքների համար ստացել եմ տարատեսակ սպառնալիքներ, ճնշումներ համայնքի ղեկավարի՝ Արսեն Աղաբաբյանի կողմից: Տարատեսակ սպառնալիք ասելով՝ ի նկատի ունեմ, որ ինձ եղել է հորդոր, որ ես հրաժարվեմ իմ քաղաքական, հրապարակային գործունեությունից, ասել է՝ եթե մեզ հետ ես, աշխատում ես մեր մոտ, եթե կառավարության հետ ես, մեզ մոտ չես աշխատելու, քանի որ աջակցել եմ ՀՀ կառավարությանը և պետությանը սահմանազատման գործընթացի շուրջ, որը սկսել է շուրջ երկու ամիս առաջ: Համայնքի ղեկավարի կողմից ստացել եմ հորդոր, որպեսզի ես դիմում գրեմ և աշխատանքից հեռանամ, քանի որ ես աջակցում եմ կառավարությանը, առաջարկել է աշխատել կառավարության հետ, ես բնականաբար հրաժարվել եմ ազատման դիմում գրելուց, նշված զրույցը ձայնագրվել է իմ կողմից, ինքը տեղյակ է եղել, որ ձայնագրում եմ, ես բոլորին զգուշացրել եմ, որ իմ աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար բոլորին ձայնագրելու եմ: Իմ կողմից ազատման դիմում գրելուց հրաժարվելուց հետո նա՝ Արսեն Աղաբաբյանը, սպառնում է, որ ինձ լուսամուտից ցած կնետի, նշված զրույցն ընթացել է Արսեն Աղաբաբյանի աշխատասենյակում, որը գտնվում է համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկում, ապա ինձ սպառնացել է, որ ես եթե դիմում չեմ գրում աշխատանքից ազատվելու մասին, ապա ինքն ինձ կազատի: Այս զրույցն իմ հիշելով եղել է շուրջ 1 ամիս առաջ, նշված զրույցից հետո իմ նկատմամբ սկսվել են տարատեսակ ճնշումներ, որը դրսևորվել է խտրականությամբ, մի քանի օր ես ստացել եմ բացականեր կրթության,

մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի պետի՝ Լ.Ա.-ի կողմից, սակայն ես աշխատանքի եմ հաճախել և աշխատանքային ժամերին գտնվել եմ աշխատավայրում, ինձ համայնքապետի գործավար Լ.-ն չի տրամադրել աշխատանքի հաճախման մատյանը, որտեղ աշխատողները ստորագրում են, նշված մատյանում են լրացվում բացակաները, համայնքապետարանում կան աշխատողներ, որոնք նշված մատյանն ընդհանրապես չեն ստորագրում, նաև ես շուրջ 1 տարի չեմ ստորագրել այդ մատյանը, սակայն բացակա չեմ սպացել, այդ ամենը եղել է մինչև իմ կողմից նշվածը՝ հրապարակային և քաղաքական դիրքորոշումս արտահայտելը: Ինձ Լ.-ն հայտնել է, որ համայնքի ղեկավարը արգելել է ինձ տրամադրել աշխատանքի հաճախելու մատյանը, ընդհուպ նույնիսկ ոչ թե ստորագրելու համար, այլ իմ կողմից ծանոթանալու համար, թե որ օրերին եմ բացակա սպացել: Այսօր՝ 2024 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 09:00-ից 09:30-ի սահմաններում, գնացել եմ աշխատանքի, կրկին մի քանի անգամ գործավար Լ.-ին խնդրել եմ տրամադրել աշխատանքի հաճախման մատյանը, սակայն նա չի տրամադրել՝ ասել է, որ համայնքի ղեկավարն ասել է, որ ինձ մատյանը չտրամադրեն: Դրանից հետո իմ անձնական հեռախոսի միջոցով իմ իրավունքները պաշտպանելու նպատակով կրկին մոտեցել եմ գործավար Լ.-ին և տեղեկացրել, որ ինքը տեսաձայնագրառվում է, խնդրում եմ տրամադրել մատյանը կամ հիմնավորել՝ ինչու չեն տրամադրում: Առանց ինձ որևէ բան ասելու Լ.-ն մտավ համայնքապետ Արսեն Աղաբաբյանի աշխատասենյակ, այս ընթացքը տեսաձայնագրառվել է, որից հետո Լ.-ն փակել է դուռը, ապա համայնքի ղեկավարը իր աշխատասենյակից հանկարծակի դուրս եկավ, սկսեց քաշքշել իմ ձեռքից և բռնի ուժով խլեց իմ հեռախոսը, որով տեսաձայնագրառում էի կատարում, հստակ չեմ տեսել, թե տեսաձայնագրառումը պահպանելու համար համապատասխան հրահանգ՝ սեղմակոճակը սեղմել եմ, թե ոչ: Այսպես համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը բռնի ուժող հափշտակեց իմ հեռախոսը և մինչ այս պահը նա հեռախոսս չի վերադարձրել: (...) Երբ Արսեն Աղաբաբյանը ինձ քաշքշեց և բռնի ուժով վերցրեց իմ ձեռքից իմ հեռախոսը, այդ ժամանակ ընդունարանում գտնվել ենք ես, Արսեն Աղաբաբյանը, գործավար Լ.-ն և Կ.Ա.-ն, ով համայնքի ղեկավարի խորհրդականն է: Լ.-ն կամ Կ.Ա.-ն ինձ չեն քաշքշել, որևէ գործողություն իմ նկատմամբ չեն կատարել: (...) Արսեն Աղաբաբյանը մի ձեռքով

բռնել է ձախ ձեռքը, հետո հրել, ապա ինձ քաշքշելով խլել հեռախոսս, որը գտնվում էր իմ աջ ձեռքում, հեռախոսս գուցե նաև վնասված լինի, ենթադրում եմ, որ իմ անձնական գույքին վնաս է պատճառվել: Արսեն Աղաբաբյանի կողմից ինձ քաշքշելու, ձեռքիցս բռնելու հետևանքով տեսանելի մարմնական վնասվածք չեմ ստացել, որևէ բուժհիմնարկ չեմ դիմել, զգացել եմ միայն ցավ: (...) »:

2.2.2. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի՝ 2024 թվականի հունիսի 19-ի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Փորձաքննությունը նշանակելու մասին որոշումը տուժող Ս.Ա.-ին ծանոթացնելու մասին 2024 թվականի հունիսի 19-ին կազմված արձանագրության մեջ տուժողը նշել է, որ ինքը մարմնական վնասվածք չի ստացել, բուժօգնություն ստանալու համար որևէ բուժհիմնարկ չի դիմել, դատաբժշկական փորձաքննության կարիք չունի:

2.2.3. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի՝ 2024 թվականի հունիսի 20-ի որոշմամբ կատարվել է Ս.Ա.-ին պատկանող բջջային հեռախոսի առգրավում Նոյեմբերյան համայնքի ղեկավար Ա. Աղաբաբյանից՝ վերջինիս աշխատասենյակից:

2.2.4. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի՝ 2024 թվականի հունիսի 20-ի որոշմամբ առգրավվել է Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների հիշողության կոշտ կրիչը՝ հետագայում թվային խուզարկություն կատարելու նպատակով:

2.2.5. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 24-ի թիվ Ե-01/1638 գրությամբ նշվել է, որ Ս.Ա.-ն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանում աշխատում է 2022 թվականի ապրիլի 18-ից և զբաղեցնում է Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սոցիալական աջակցության, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի պաշտոնը:

2.2.6. 2024 թվականի հուլիսի 11-ին կատարված՝ Ս..-ին պատկանող բջջային հեռախոսի զննությամբ պարզվել է, որ բջջային հեռախոսն արտաքինից վնասված չէ,

սակայն չի պահպանվել 2024 թվականի հունիսի 19-ին Նոյեմբերյանի համայնքապետարանում Ս.Ա.-ի կողմից կատարված տեսաձայնագրությունը:

2.2.7. 2024 թվականի հուլիսի 26-ին կատարված՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների հիշողության կոշտ կրիչում զննման արդյունքներով արձանագրվել է հետևյալը.

« (...) Մինչև 2024-06-19՝ ժամը 09:38:22-ը, քրեական վարույթով հետաքրքրություն ներկայացնող տեսանկարահանում առկա չէ, տեսագրությունում բացակայում է ձայնը, ապա նշված օրը՝ 09:38:22-ին Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի համայնքապետարանի համայնքապետի ընդունարան է մտնում մի տղամարդ, որը արտաքինից ենթադրվում է, որ հանդիսանում է վարույթով տուժող Ս.Ա.-ն (...): Ս.Ա.-ն մոտենում է ընդունարանի աշխատողի աշխատասեղանին, ձեռքի և շրթունքների շարժումից հասկացվում է, որ ինչ-որ բան է խոսում աշխատասեղանի մյուս կողմում հավանաբար գտնվող անձի հետ, (...), այնուհետև 09:38:34-ին հետ է շրջվում դեպի ընդունարանի մուտքի դուռը և 09:38:34-ին դուրս գալիս ընդունարանից: (...) Ժամը 10:05:35-ին ընդունարան է մտնում Ս.Ա.-ն, աջ ձեռքին է գտնվում հեռախոսը, որը պարզած է դեպի ընդունարանի աշխատասեղանի կողմը՝ հավանաբար դեպի աշխատողի ուղղությամբ, աշխատողը տեսանկարահանման դաշտում չի երևում, մոտենում է աշխատասեղանին, ինչ-որ բան է խոսում, նրա շարժուձևից այդպես է հասկացվում, շարունակաբար հեռախոսը պարզած է դեպի աշխատասեղանի կողմը, հասկացվում է, որ նա տեսանկարահանում է, ժամը 10:06:17-ին աշխատասեղանի մյուս կողմից տեսանկարահանման դաշտ է մտնում կին աշխատող, որը ենթադրվում է, որ հանդիսանում է աշխատակցուհի Լ.-ն (այսուհետ Լ.), նա գնում է դեպի համայնքապետի աշխատասենյակի դռան մոտ և ժամը 10:06:20-ին մտնում է համայնքապետի աշխատասենյակ: Ս.Ա.-ն այնուհետև հեռախոսը պարզում է դեպի համայնքապետի աշխատասենյակի մուտքի դրան կողմը, ժամը 10:06:24-ին ընդունարան է մտնում մի տղամարդ, ում ձեռքին առկա են փաստաթղթեր, հավանաբար հանդիսանում է Կ.Ա.-ն, ով ժամը 10:06:29-ին մտնում է համայնքապետի աշխատասենյակ: Ժամը 10:06:50-ին իր աշխատասենյակից դուրս է գալիս՝ ընդունարան է մտնում մի տղամարդ, ով ենթադրվում է, որ հանդիսանում է համայնքապետ Արսեն Աղաբաբյանը (այսուհետ

Արսեն Աղաբաբյան) և Կ.Ա.-ն, վերջինս փակում է ընդունարանի մուտքի դուռը, ժամը 10:06:52-ին Արսեն Աղաբաբյանը երկու ձեռքով բռնում է Ս.Ա.-ի երկու ձեռքերը, (...): Արսեն Աղաբաբյանը անմիջապես վերցնում է Ս.Ա.-ի ձեռքին գտնվող բջջային հեռախոսը, վերջինս անմիջապես դուրս է գալիս համայնքապետի աշխատասենյակի ընդունարանից: (...)»:

2.2.8. 2024 թվականի նոյեմբերի 18-ին Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի գործավար Լ.Մ.-ն տվել է հետևյալ ցուցմունքը.

« (...) 2024 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում կամ դրանից ավելի հետո ես գտնվում էի իմ աշխատասենյակում՝ համայնքապետի ընդունարանում, երբ այդտեղ եկավ կրթության բաժնի աշխատող Ս.Ա.-ն և պահանջեց, որ իրեն տրամադրեմ աշխատաժամանակ տեղեկագիրը, որն իրենից ենթադրում է աշխատողների աշխատանքի այցելելու վերաբերյալ մատյան, որտեղ ստորագրում են աշխատողները: Ես Ս.-ին պատասխանեցի, որ չեմ կարող տրամադրել աշխատաժամանակ տեղեկագիրը, քանի որ այն արդեն հանձնել եմ համայնքի ղեկավարին, այսինքն այն արդեն իմ մոտ չէր գտնվում: Այնուհետև, Ս.Ա.-ն դուրս եկավ իմ աշխատասենյակից, ապա շուրջ 20 րոպե անցած կլիներ հավանաբար, նա կրկին եկավ իմ աշխատասենյակ, այդ ժամանակ հեռախոսը ուղղված էր դեպի ինձ, ես միայնակ էի գտնվում աշխատասենյակում, Ս.-ն ասաց, որ տեսանկարահանում է, կրկին պահանջեց, որ իրեն տրամադրեմ աշխատաժամանակ տեղեկագիրը կամ էլ նշեմ, թե ինչ հիմքով չեմ իրեն տրամադրում, ես կրկին ասեցի, որ այն իմ մոտ չի գտնվում, հանձնել եմ համայնքի ղեկավարին, նա շարունակում էր նկարահանել, որից հետո ես գնացի համայնքի ղեկավարի աշխատասենյակ, համայնքի ղեկավարին տեղեկացրի, որ ընդունարան է եկել Ս.-ն և տեսանկարահանում է: Իմ տեղեկացնելուց հետո համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը և խորհրդական Կ.Ա.-ն դուրս եկան համայնքապետի աշխատասենյակից, ես մնացի համայնքապետի աշխատասենյակում միայնակ, այնտեղ սպասել եմ մինչև համայնքապետի կողմից հետ վերադառնալը, որը տևեց կարճ ժամանակ: Ես համայնքապետի աշխատասենյակում գտնվելու ժամանակ իմ աշխատասենյակից՝ ընդունարանից, գոռգոռոցների ձայներ, հայհոյանքներ չեմ լսել, (...): Ես չեմ հիշում, թե արդյոք մինչև 2024 թվականի հունիսի 19-ը, այսինքն դրան

նախորդող օրերի ընթացում Ս.Ա.-ին աշխատաժամանակի տեղեկագիրը տրամադրվել է նրան ստորագրելու, թե ոչ: Նշեմ, որ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:20-ի սահմաններում աշխատաժամանակի տեղեկագիրը հանձնում եմ համայնքապետին, այլևս ես որևէ տեղեկություն չունեմ և չգիտեմ, թե արդյոք 2024 թվականի հունիսի 19-ից առաջ համայնքապետ Արսեն Աղաբաբյանի և Ս.Ա.-ի միջև որևէ վեճ կամ միջադեպ եղել է, թե ոչ՝ կապված նրա քաղաքական հայացքների և որոշումների հետ: (...)»

2.2.9. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սոցիալական աջակցության, երիտասարդության և սպորտի բաժնի պետ Լ.Ա.-ն 2024 թվականի նոյեմբերի 18-ին տվել է հետևյալ ցուցմունքը.

«(...) Իմ լսելով Ս.-ն տեսանկարահանելիս է եղել այն պատճառով, որ իրեն չի տրամադրվել աշխատանքի այցելությունների մատյանը, որպեսզի նա ստորագրի, նրան այդ մատյանը չի տրամադրվել, քանի որ ներկայացել է աշխատանքային ժամը սկսվելուց ուշ: Նախքան 2024 թվականի հունիսի 19-ը Ս.Ա.-ն 3-4 օր ևս կամ ուշ է հաճախել աշխատանքի, կամ չի հաճախել, ես նրան նախապես զգուշացրել եմ, որ աշխատանքի հաճախի ժամը 09:00-ին, քանի որ աշխատանքային ժամը 09:00-ին է սկսվում, նա ուշ է եկել կամ չի եկել, ուստի 3-4 օր ստացել է բացակա: (...)»:

2.2.10. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի խորհրդական Կ.Ա.-ն 2024 թվականի նոյեմբերի 18-ին տվել է հետևյալ ցուցմունքը.

«(...) 2024 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 09:00-ից հետո ես աշխատանքի բերումով գնացի համայնքի ղեկավարի՝ Արսեն Աղաբաբյանի աշխատասենյակ, քանի որ շտապում էի, տեսա, որ միայնակ ընդունարանում գտնվում է համայնքապետարանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բաժնի աշխատակից Ս.Ա.-ն, նրա վրա ուշադրություն չդարձրի, նրա հետ չխոսացի, այլ անմիջապես մտա Արսեն Աղաբաբյանի աշխատասենյակ, այդ ժամանակ համայնքապետն արդեն գտնվում էր իր աշխատասենյակի կենտրոնում, գալիս էր դեպի դռան կողմը, նրա աշխատասենյակում էր գտնվում նաև ընդունարանի աշխատակից, գործավար Լ..Մ.-ն, վերջինիցս տեղեկացա, որ Ս.-ն եկել է և նկարահանում է, այլ մարդու այնտեղ գտնվելու հանգամանք իմ մեջ տպավորված չէ: Արսեն Աղաբաբյանը դուրս եկավ իր աշխատասենյակից, ես էլ անմիջապես դուրս եկա, տեսա, որ Ս.-ն հեռախոսն ուղղած է

դեպի համայնքապետի ուղղությամբ, թե միացրած էր, թե ոչ, չգիտեմ: Հինգից յոթ վայրկյանի ընթացքում Արսեն Աղաբաբյանը վերցրեց Ս.Ա.-ի ձեռքից հեռախոսը, իսկ ես նրան դուրս տարա ընդունարանից, Արսեն Աղաբաբյանի կողմից որևէ հայհոյանք չի հնչեցվել Ս.-ի կամ ընդհանրական որևէ մեկի հասցեին, նա Ս.-ի նկատմամբ բռնություն չի գործադրել, չի հարվածել, միայն նրա ձեռքից վերցրել է հեռախոսը: (...)»:

2.2.11. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի կողմից 2024 թվականի նոյեմբերի 19-ին Ս.Ա.-ի ներկայացրած ձայնագրության զննմամբ արձանագրվել է հետևյալը.

«(...) Ձայնագրությունը միացվեց, սկզբում չի հասկացվում, թե ինչ է խոսվում, ձայնը նման է Նոյեմբերյանի համայնքապետ Արսեն Աղաբաբյանի ձայնին (այսուհետ Արսեն Աղաբաբյան), հաջորդ ձայնը նման է Ս.Ա.-ի ձայնին (այսուհետ Ս.Ա.):

Արսեն Աղաբաբյան – քեզ ասեցի կոնկրետացի չէ դու,

Ս.Ա. – կոնկրետացել եմ, իշխանություն եմ տարածում էլի,

Արսեն Աղաբաբյան – դու պետքա ջոգես, սրի ես, թե ընդի, եթե ընդի ես, ուրեմն գնում ես ընդի, եթե սրի ես, ուրեմն մնում ես սրի,

Ս.Ա. – ընդեն որն ա,

Արսեն Աղաբաբյան – դու գնում ես մարզպետարան, մարզպետարան խի էիր գնացել, գնացել ես ասել Արսենն ինչ ա ասում,

Ս.Ա. – ասել ես կողմնորոշվի, ես էլ գնացել էի, ասում էի,

Արսեն Աղաբաբյան – ասիր ոնց ես ուրիշ, հա, այսինքն դու տեղեր կա, որ դեռ պետք ա գնաս ինձանից բողոքես,

Ս.Ա. – չեմ բողոքել,

Արսեն Աղաբաբյան – աա, դու, ասում են օձին՝ ում կկծես, ասում ա՝ ինձ հաց տվողին, հմի տոչնի դու ես, արա,

Ս.Ա. – Դուք չասեցիք կողմնորոշվի, ես էլ,

Արսեն Աղաբաբյան – կողմնորոշվեցիր հմի,

Ս.Ա. – հա,

Արսեն Աղաբաբյան – դե հմի կգնաս դիմումդ կգրես ու կգնաս ձեր տուն, Սուրեն,

Ս.Ա. – չեմ գրում ես դիմում,

Արսեն Աղաբաբյան – չես գրում, ես կհանեմ, ազատելուն ինչ ա էլել,

Ս.Ա. – խնդրեմ, կարաք ազատեք,

Արսեն Աղաբաբյան – վսյո, օքեյ, փաստորեն չհասկացար դու տենց էլ, (չի հասկացվում ինչ է ասում), խի թողինք քու կամքովն ըլի, երբ ուզես, երբ գնաս, չհասկացար դու ըտենց էլ,

Ս.Ա. – միշտ էլ գործի եմ գալի, իմ աշխատանքը ես հարյուր տոկոսանոց,

Արսեն Աղաբաբյան – ոնց ես միշտ էլ գործի գալիս, բա ես չգիտեմ՝ դու երբ ես գալի, երբ գնում,

Ս.Ա. – ինձ թվում ա՝ ես աշխատանքում չեմ թերացել, ինձ թվում ա՝ ես աշխատանքում չեմ թերացել,

Արսեն Աղաբաբյան – դու իննից գործի ես, վեցին էլ կգնաս տուն, ոչ թե իրեք օրը մին, չորս օրը մին կգաս,

Ս.Ա. – ես իմ աշխատանքից թերացե՞լ եմ, բան ա էլե՞լ, որ հանձնարարեք, կիսատ մնա,

Արսեն Աղաբաբյան – խու լիզվին տալով չի, խոսելով չի, հանձնարարելով չի, դու իննից գործի ես, վեցին կգնաս տուն,

Ս.Ա. – ես գալիս եմ իննին գործի, վեցին գնում,

Արսեն Աղաբաբյան – ես գիտեմ՝ դու երբ ես գալիս, երբ ես գնում,

Ս.Ա. – դե ֆիքսենք էդ ամեն ինչը,

Արսեն Աղաբաբյան – եթե դու, արդեն հասել ենք ըտի, ուրեմն ես քեզ կղրգեմ տուն, եթե քեզ թվում ա, թե քու կյյաուզաները պտի իմ վրա ազդի,

Ս.Ա. – ես կյյաուզնիկ չեմ,

Արսեն Աղաբաբյան – բա ինչ ես,

Ս.Ա. – Դուք ասել եք կողմնորոշվի, ես էլ գնացել եմ մարզպետարան,

Արսեն Աղաբաբյան – (չի հասկացվում) պահում ես ու ասում զապիս ես լինում, ինչն ա զապիս գնում, արա, դու խու լակոտ չես, արա, եքա մարդ ես, արա,

Ս.Ա. – հանգստացեք, իմ հետ նորմալ խոսեք, խնդրում եմ,

Արսեն Աղաբաբյան – ի, Ս., կարողա վիրունեմ երկրորդ հարկից վրա անեմ, գլխի ըլիս, նորմալը որն ա, դու սաղ խառնել ես ռամսերդ, արա,

Ս.Ա. – կդիմենք դատարան,

Արսեն Աղաբաբյան – դատարան չէ, որտեղս ուզում ես դիմի, էդ ինչ բան ա, զապիս ա, քեզ զապիս եմ անում, ինչի զապիսն ես անում, արա,

Ս.Ա. – որ չսպառնաք,

Արսեն Աղաբաբյան – գործ տվողնի եք, ինչ եք,

Ս.Ա. – գործ տվողը թաքուն ա գործ տալիս,

Արսեն Աղաբաբյան – բա ինչ ես, զապիս անողն ինչ ա, իմ մոտ դրանք նույն բաներն են սաղ, թաքուն ըլի, բացաշկյարա լինի, դրանք սաղ նույնն են,

Ս.Ա. – ես հանրային գործունեություն ես ծավալում, ես իմ իշխանության հետ եմ, վարչապետի հետ եմ,

Արսեն Աղաբաբյան – ինչ իշխանություն ա, որ իշխանության հետ ես, գնալու ես զապիս անես,

Ս.Ա. – ես իմ իշխանության հետ եմ, իմ ոտը թող չտրորեն ուրիշը,

Արսեն Աղաբաբյան – ով ա տրորում քո ոտը, բա գնա իշխանության հետ աշխատի, արա, ինչ ես շինում ըստի,

Ս.Ա. – իմ համայնքն ա, ես իմ համայնքում եմ աշխատում,

Արսեն Աղաբաբյան – քո համայնքի իշխանության հետ ես աշխատում,

Ս.Ա. – իմ համայնքի հետ եմ ես աշխատում,

Արսեն Աղաբաբյան – հա, մենք ըստի կապ չունենք փաստորեն, դու ուղղակի ըտենց որոշել ես, համայնքի հետ աշխատում ես, դե փորձի աշխատես, էլավ, հաջող, Ս.,

Ս.Ա. – հաջող:»:

2.2.12. Արսեն Աղաբաբյանը 2024 թվականի նոյեմբերի 21-ին հրաժարվել է ցուցմունք տալուց:

2.2.13. ՀՀ Տավուշի մարզի դատախազի տեղակալը 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունել է քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշում, որով արձանագրվել է հետևյալը.

«(...) ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ինքնիրավչության՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքն ինքնակամ իրականացնելու համար, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն հափշտակված գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), (...)

Հիմք ընդունելով վերոգրյալը փաստվում է, որ Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Լիպարիտի Աղաբաբյանի կողմից Ս.Ա.-ի հետ աշխատանքային փոխհարաբերություններով պայմանավորված խոսակցության ընթացքում սպանության կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքը կոնկրետ և իրական չի եղել, Արսեն Աղաբաբյանի կողմից Ս.Ա.-ի նկատմամբ տարբերակված վերաբերմունք չի դրսևորվել, այլ միայն պահանջվել է աշխատանքային ժամի սկզբից՝ 09:00-ից ներկայանալ աշխատանքի և աշխատանքն ավարտել աշխատանքային ժամի վերջին՝ 18:00-ին: Ս.Ա.-ի կողմից իրեն պատկանող 65.000 ՀՀ դրամ արժողությամբ «Motorola XT2213-3 Moto G 5G» տեսակի բջջային հեռախոսով տեսաձայնագրառում կատարելու պատճառով Արսեն Աղաբաբյանն իրականացրել է իր ենթադրյալ իրավունքը՝ ***առանց բռնություն գործադրելու*** *Ս.Ա.-ի ձեռքից վերցրել է նրա բջջային հեռախոսը, որի արժեքը խոշոր չափերի չի հասնում, ուստի գտնում եմ, որ Արսեն Լիպարիտի Աղաբաբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ*

կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում չի կարող հարուցվել՝ անձի կողմից իրեն մեղսագրվող արարքները կատարած չլինելու հիմքով:

(...)»:

2.3. ՀՀ Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ի միջնորդագրի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ միջնորդագրով դատախազը դիմել է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանուն՝ նշելով.

«(...) Քրեական վարույթով հաստատվել է, որ Ա.Աղաբաբյանի և Ս.Ա.-ի միջև տեղի ունեցած խոսակցության, որի ընթացքում Արսեն Աղաբաբյանը, ըստ էության, Ս.Ա.-ի քաղաքական կողմնորոշումներով պայմանավորված հորդորներ է հասցրել աշխատանքից ազատման դիմում գրելու նպատակով: Բացի այդ պարզվել է նաև, որ 2024 թվականի հունիսի 19-ին Ա.Աղաբաբյանը իրականացրել է իր ենթադրյալ իրավունքները՝ առանց հափշտակելու նպատակի ***բռնություն գործադրելով*** *Ս.Ա.-ի կողմից նկարահանում իրականացնելը խոչընդոտելու նպատակով նրա ձեռքից վերցրել է բջջային հեռախոսը (...):»:*

Վերոգրյալի հիման վրա՝ դատախազը միջնորդել է, ի թիվս այլնի, քննարկման առարկա դարձնել իրենց աշխատանքում թերացած անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2.4. Քրեական վարույթի շրջանակներում 2024 թվականի հուլիսի 26-ին կատարված՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների հիշողության կոշտ կրիչում զննում կատարելու և վարույթի համար նշանակություն ունեցող տեսանկարահանումները այլ կրիչի վրա պատճենելու մասին արձանագրությանը կից լազերային սկավառակի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Սկավառակում ներառված է 2024 թվականի հունիսի 19-ին Նոյեմբերյան համայնքի ղեկավարի ընդունարանի տեսախցիկով կատարված տեսագրության 44 հատված: Տեսանյութերը ձայն չունեն, դրանց ներքևի ձախ հատվածում գրված է «CAM01», իսկ վերևի աջ հատվածում նշված են ամսաթիվը և ժամը: Մինչև

«37_01_R_20240619100436» անվանակոչմամբ տեսագրությունը սույն վարույթի շրջանակներում հետաքրքրություն ներկայացնող տեսագրություն առկա չէ: Նշված տեսագրությունում 10:05:35 րոպեին ընդունարան է մտնում կարմիր շապիկով և կապույտ տաբատով տղամարդ, ով ենթադրվում է, որ Ս.Ա.-ն է: Վերջինիս աջ ձեռքում հեռախոս է, նա մոտենում է ընդունարանի աշխատակցին և ինչ-որ բան է խոսում: 10:06:17 րոպեին տեսագրությունում երևում է մի կին, ենթադրաբար՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի գործավար Լ.Մ.-ն, ով մտնում է Նոյեմբերյան համայնքի ղեկավարի աշխատասենյակ: Հաջորդ տեսանյութում՝ «38_01_M_20240619100621» անվանակոչմամբ 10:06:25 րոպեին ընդունարան է մտնում սպիտակ և մուգ կապույտ շապիկով և սև տաբատով տղամարդ՝ փաստաթղթերը ձեռքին, ով մտնում է համայնքի ղեկավարի աշխատասենյակ: «39_01_M_20240619100647» անվանակոչմամբ տեսանյութում 10:06:46 րոպեին երևում է, որ բաց կապույտ վերնահագուստով և սև տաբատով մի տղամարդ, ով ենթադրաբար Արսեն Աղաբաբյանն է, իր աշխատասենյակից մտել է ընդունարան: Հաջորդ կադրում՝ 10:06:52 րոպեին, տեսանյութում երևում է, որ Ա.Աղաբաբյանը երկու ձեռքով բռնել է Ս.Ա.-ի ձեռքերը, իսկ վերջինս երկու ձեռքերով բռնել է Ա.Աղաբաբյանի վերնահագուստը, Ս.Ա.-ի ձեռքում բացակայում է բջջային հեռախոսը, իսկ Ա.Աղաբաբյանի ձախ ձեռքում առկա է հեռախոս: Տեսագրությունում երևում է նաև Կ.Ա.-ն, ով կանգնած է ընդունարանի դռան մոտ: Հաջորդ կադրը 10:07:05 րոպեին է, որում արդեն ընդունարանում որևէ անձ առկա չէ:

Տեսագրությունների ուսումնասիրությամբ հարկ է արձանագրել, որ դրանցում առկա են ընդհատումներ, ինչի արդյունքում հնարավոր չէ դիտարկել Ա.Աղաբաբյանի և Ս.Ա.-ի միջև միջադեպի ամբողջ ընթացքը, այլ տեսանելի են միայն 10:06:46 և 10:06:52 րոպեներին տեսագրված երկու կադրերը:

2.5. 2025 թվականի մարտի 24-ին, ժամը 14:49-ին և ժամը 14:57-ին Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցները հեռախոսազրույց են ունեցել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի, կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի հետ, ով տեղեկացրել է, որ

Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների կոշտ կրիչներում տեսագրությունները պահվում են առավելագույնը 30 օր ժամկետով:

III. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

3.1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածով սահմանվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և նախատեսվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս: (...)»:

3.2. Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

3.3. Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն <u>որոշման հավելվածով</u> սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ

պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն՝ կանոնագիրքը հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների համախումբ է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:

3.4. Վարքագծի կանոնագրքի 39-րդ կետի համաձայն.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձը, պաշտոնեական (ծառայողական) լիազորություններն իրականացնելիս, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, չգործադրել հոգեբանական կամ այլ տեսակի բռնություն կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, ինչպես նաև՝ զերծ մնալ այլ անձանց նկատմամբ ոտնձգության ցանկացած դրսևորումից:»:

3.5. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)»:

IV. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումները

Սույն վարույթը հարուցվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ լրատվամիջոցի հրապարակման հիման վրա: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե խախտումն առնչվում է վարքագծի կանոնի այնպիսի խախտման, որով անմիջականորեն շոշափվում են կոնկրետ անձի իրավունքները, ապա այդ դեպքում Հանձնաժողովը վարույթ կարող է հարուցել բացառապես շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ այն դեպքերում, երբ հարցն ունի հանրային մեծ հետաքրքրություն, կամ խախտումը կրում է համակարգային բնույթ:

Հարուցման որոշմամբ Հանձնաժողովն արձանագրել է.

« (...) հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլոց նկատմամբ ապօրինի ֆիզիկական ուժի կամ բռնության գործադրումն անհամատեղելի է ժողովրդավարական հասարակության հիմնասյուն հանդիսացող՝ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, ուստիև աներկբայորեն հանրային հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ կարող է նշանակալի ազդեցություն ունենալ ոչ միայն բռնությունից տուժած անձի, այլև ամբողջ հասարակության համար: Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բռնության գործադրումը, բացի կոնկրետ անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի խախտումից, նաև լուրջ ռիսկեր է պարունակում հանրային հեղինակությանը վնասելու տեսանկյունից:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բռնության գործադրումը «Հանրային ծառայության մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված՝ բարեկրթության և հարգալիրության սկզբունքների կոպիտ խախտում է, ընդ որում՝ անկախ այն հանգամանքից՝ արդյոք բռնության գործադրումը տվյալ դեպքում պարունակում է հանցակազմի հատկանիշներ, թե ոչ: Ըստ այդմ, վարքագծի կանոնների առերևույթ խախտումների ծանր դրսևորումների թվում են այն արարքները, որոնք դրսևորվել են բռնության գործադրմամբ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն դեպքում վարույթի առարկա առերևույթ խախտումը՝ Արսեն Աղաբաբյանի կողմից Ս.Ա.-ի նկատմամբ ենթադրյալ բռնության կիրառումը, ներկայացնում է հանրային մեծ հետաքրքրություն:»:

Վերոգրյալից ելնելով՝ կարող ենք արձանագրել, որ թիվ 13/2024-Վ/Վ վարույթը հարուցվել է ոչ թե հրապարակմամբ ներկայացված բոլոր փաստական հանգամանքների, այլ միայն Ա.Աղաբաբյանի կողմից Ս.Ա.-ի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու փաստի՝ որպես հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող առերևույթ խախտման առնչությամբ:

Ըստ այդմ, սույն եզրակացության շրջանակներում վարքագծի կանոնի խախտման առկայությունը կամ բացակայությունն արձանագրելու նպատակով գնահատման է ենթակա միայն այն հանգամանքը՝ արդյոք 2024 թվականի հունիսի 19-ին Ա.Աղաբաբյանը բռնություն է կիրառել Ս.Ա.-ի նկատմամբ:

Սույն եզրակացության 2-րդ բաժնով ներկայացված այլ փաստական հանգամանքները, այդ թվում՝ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալի կողմից 2024 թվականի նոյեմբերի 19-ին Ս.Ա.-ի ներկայացրած ձայնագրության զննման արձանագրությունը Հանձնաժողովի կողմից ենթակա են գնահատման այնքանով, որքանով դրանք կարող են հիմնավորել կամ ժխտել Ա.Աղաբաբյանի կողմից 2024 թվականի հունիսի 19-ին Ս.Ա.-ի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը: Միաժամանակ, վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում չի կարող գնահատել նշված արձանագրությամբ ներկայացված՝ Ա.Աղաբաբյանի վարքագծի համապատասխանությունը Վարքագծի կանոնագրքին: Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված հանգամանքը հաստատվել է միայն քրեական վարույթի շրջանակներում Ս.Ա.-ի տված ցուցմունքով, ով նշել է, որ 2024 թվականի հունիսի 19-ին Նոյեմբերյան համայնքի ղեկավարի ընդունարանում Ա.Աղաբաբյանը քաշքշել է իր ձեռքից և բռնի ուժով խլել իր հեռախոսը:

Մինչդեռ, քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Ա.Աղաբաբյանի կողմից ենթադրյալ խախտման պահին բացի Ա.Աղաբաբյանից և Ս.Ա.-ից ներկա է գտնվել նաև ՀՀ Տավուշի մարզի

Նոյեմբերյան համայնքի ղեկավարի խորհրդական Կ. Ա.-ն, ով քրեական վարույթի շրջանակներում տված ցուցմունքով ժխտել է Ա.Աղաբաբյանի կողմից Ս.Ա.-ի նկատմամբ բռնություն կիրառելու հանգամանքը՝ նշելով, որ Նոյեմբերյանի համայնքապետի գործավար Լ.Մ.-ն, գալով Ա.Աղաբաբյանի աշխատասենյակ, վերջինիս հայտնել է, որ Ս.Ա.-ն գտնվում է համայնքի ղեկավարի ընդունարանում և նկարահանում է իր բջջային հեռախոսով, ինչից հետո Ա.Աղաբաբյանը դուրս է եկել իր աշխատասենյակից, Ս.Ա.-ի ձեռքից վերցրել նրա հեռախոսը, որը վերջինս պահել էր դեպի Ա.Աղաբաբյանը: Ըստ Կ.Ա.-ի՝ Ա.Աղաբաբյանը Ս.Ա.-ի նկատմամբ բռնություն չի գործադրել, չի հարվածել, միայն նրա ձեռքից վերցրել է հեռախոսը:

Ա.Աղաբաբյանի կողմից բռնություն գործադրելու հանգամանքը չի հաստատվել նաև այլ վկաների ցուցմունքներով, որոնք, սակայն, ներկա չեն գտնվել դեպքի վայրում և քրեական վարույթն իրականացնող մարմնին հայտնել են միայն այլ աշխատակիցներից լսած տեղեկատվությունը:

Հանձնաժողովն առանձնակի կարևորում է քրեական վարույթի շրջանակներում Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների հիշողության կոշտ կրիչում զննում կատարելու և վարույթի համար նշանակություն ունեցող տեսանկարահանումները այլ կրիչի վրա պատճենելու մասին 2024 թվականի հուլիսի 26-ի արձանագրության և արձանագրությանը կից լազերային սկավառակի ուսումնասիրությունը:

Այսպես, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից նշված արձանագրությամբ նշվել է, որ 2024 թվականի հունիսի 19-ի ձայնագրությամբ երևում է, որ ժամը 10:05:35-ին ընդունարան է մտնում Ս.Ա.-ն, ում աջ ձեռքին է գտնվում հեռախոսը, որը պարզած է դեպի ընդունարանի աշխատասեղանի կողմը: Այնուհետև, ժամը 10:06:17-ին աշխատասեղանի մյուս կողմից տեսանկարահանման դաշտ է մտնում կին աշխատող, ով ժամը 10:06:20-ին մտնում է համայնքապետի աշխատասենյակ: Ժամը 10:06:50-ին իր աշխատասենյակից դուրս է գալիս Ա.Աղաբաբյանը՝ Կ.Ա.-ի հետ, իսկ ժամը 10:06:52-ին Արսեն Աղաբաբյանը երկու ձեռքով բռնում է Ս.Ա.-ի երկու ձեռքերը: Արձանագրությամբ նշվել է, որ Արսեն Աղաբաբյանն անմիջապես վերցնում է

Ս.Ա.-ի ձեռքին գտնվող բջջային հեռախոսը, վերջինս անմիջապես դուրս է գալիս համայնքապետի աշխատասենյակի ընդունարանից:

Վերոգրյալ ապացույցների հետազոտմամբ ՀՀ Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ի՝ քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշմամբ փաստվել է, որ Նոյեմբերյան համայնքի ղեկավար Ա.Աղաբաբյանն **առանց բռնություն գործադրելու** Ս.Ա.-ի ձեռքից վերցրել է նրա բջջային հեռախոսը:

Միաժամանակ, ՀՀ Տավուշի մարզի դատախազի տեղակալի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ի միջնորդագրի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ միջնորդագրով նշվել է, որ 2024 թվականի հունիսի 19-ին Ա.Աղաբաբյանը իրականացրել է իր ենթադրյալ իրավունքները՝ առանց հափշտակելու նպատակի **բռնություն գործադրելով** Ս.Ա.-ի կողմից նկարահանում իրականացնելը խոչընդոտելու նպատակով նրա ձեռքից վերցրել է բջջային հեռախոսը:

Հանձնաժողովը լազերային սկավառակի ուսումնասիրությամբ արձանագրում է, որ Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների հիշողության կոշտ կրիչից վարույթի համար նշանակություն ունեցող տեսանկարահանումներն ընդհատվում են, մասնավորապես, ի թիվս այլնի, բացակայում են 10:06:47-ից մինչև 10:06:51 և 10:06:52-ից մինչև 10:07:04 րոպեները, ինչը զրկում է Հանձնաժողովին միջադեպի ամբողջական տեսագրությունն ուսումնասիրելու հնարավորությունից: Տեսագրության ուսումնասիրմամբ Հանձնաժողովը փաստում է, որ Ս.Ա.-ն 2024 թվականի հունիսի 19-ին, ժամը 10:05-ին եկել է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի ընդունարան՝ աջ ձեռքում պահելով իր բջջային հեռախոսը և այն ուղղելով դեպի ընդունարանի աշխատակիցը: Վերջինիս հետ զրույցից հետո, որի բովանդակությունը տեսագրությամբ հնարավոր չէ պարզել՝ ելնելով ձայնի բացակայությունից, ընդունարանի աշխատակից Լ.Մ.-ն 10:06-ին մտել է համայնքի ղեկավարի աշխատասենյակ: Տեսագրությունների ընդհատումներով պայմանավորված՝ վարույթի համար էական նշանակություն ունեցող հաջորդ կադրը 10:06:46 րոպեին է, որում երևում է, որ Ա.Աղաբաբյանն իր աշխատասենյակից դուրս է

եկել ընդունարան, որտեղ գտնվում է նաև Ս.Ա.-ն՝ հեռախոսը պահելով աջ ձեռքին: Հաջորդ կադրում՝ 10:06:52 րոպեին, տեսանյութում երևում է, որ Ա.Աղաբաբյանը երկու ձեռքով բռնել է Ս.Ա.-ի ձեռքերը, իսկ վերջինս երկու ձեռքերով բռնել է Ա.Աղաբաբյանի վերնահագուստը, Ս.Ա.-ի ձեռքում բացակայում է բջջային հեռախոսը, իսկ Ա.Աղաբաբյանի ձախ ձեռքում առկա է հեռախոս: Տեսագրությունում երևում է նաև Կ.Ա.-ն, ով կանգնած է ընդունարանի դռան մոտ: Հաջորդ կադրը 10:07:05 րոպեին է, որում արդեն ընդունարանում որևէ անձ առկա չէ:

Ըստ այդմ, ընդհատումների արդյունքում տեսագրությունների ուսումնասիրությամբ Հանձնաժողովը չի կարող փաստել Ա.Աղաբաբյանի կողմից Ս.Ա.-ի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքի մասին, քանի որ միջադեպը պատկերող միակ կադրում՝ 10:06:52 րոպեին, Ա.Աղաբաբյանը և Ս.Ա.-ն փոխադարձաբար երկու ձեռքերով բռնել են միմյանց:

Հանձնաժողովին հայտնի չեն տեսագրության ընդհատման պատճառները, միաժամանակ, 2025 թվականի մարտի 24-ին, ժամը 14:49-ին և ժամը 14:57-ին Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի հետ հեռախոսազրույցի արդյունքներով պարզվել է, որ Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում տեղադրված տեսախցիկների կոշտ կրիչներում տեսագրությունները պահվում են առավելագույնը 30 օր ժամկետով, ինչի պարագայում Հանձնաժողովը զրկված է 2024 թվականի հունիսի 19-ի տեսագրությունը պարունակող կոշտ կրիչը փորձաքննության ներկայացնելու հնարավորությունից՝ պարզելու համար ընդհատման պատճառները:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Ա.Աղաբաբյանի և Ս.Ա.-ի հարաբերությունների բնույթը բացահայտող այլ ապացույցներ, մասնավորապես՝

1) Ա.Աղաբաբյանի և Ս.Ա.-ի միջև զրույցի ձայնագրության զննման 2024 թվականի նոյեմբերի 19-ի արձանագրությունը, որի ուսումնասիրմամբ Հանձնաժողովը փաստում է, որ Ա.Աղաբաբյանը և Ս.Ա.-ն վիճաբանություն են ունեցել՝ կապված Ս.Ա.-ի կողմից Տավուշի մարզպետի աշխատակազմ գնալու և, ըստ Ա.Աղաբաբյանի, նրանից

բողոքելու հետ: Ս.Ա.-ն ժխտել է իր կողմից բողոքելը, միաժամանակ, վիճաբանությունը վերաբերել է նաև Ս.Ա.-ի քաղաքական հայացքներին և ՀՀ իշխանություններին աջակցելուն: Ա.Աղաբաբյանը, ի թիվս այլնի, նշել է՝ բա գնա իշխանության հետ աշխատի: Խոսակցության ընթացքում Ա.Ա.-ն կիրառել է վիրավորական արտահայտություններ, գործածել է առօրյա-խոսակցական և բարբառային բառեր: Վիճաբանությունը, ի թիվս այլնի, վերաբերել է նաև այն հանգամանքին, որ Ս.Ա.-ն ձայնագրում կամ տեսագրում է Ա.Աղաբաբյանի հետ խոսակցությունները, ինչպես նաև Ս.Ա.-ի՝ աշխատանքից ուշացումներին և բացակայություններին:

2) Աշխատանքի հաճախման մատյանների չստորագրման վերաբերյալ քրեական վարույթի ընթացքում Ս.Ա.-ի և մի շարք վկաների հայտնած տեղեկությունները, որոնց ուսումնասիրմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ հստակ չեն մատյանները Ս.Ա.-ի կողմից ստորագրելը թույլ չտալու պատճառները: Ըստ Ս.Ա.-ի՝ դա պայմանավորված է իր քաղաքական հայացքներով, այն դեպքում, երբ Նոյեմբերյանի համայնքապետարանի գործավարը և կրթության, մշակույթի, սոցիալական աջակցության, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետը նշել են, որ դա պայմանավորված է եղել Ս.Անանյանի ուշացումներով, քանի որ համայնքի ղեկավարը հանձնարարել է 09:20-ից հետո մատյանը հանձնել իրեն, ինչի պայմաններում այն այլևս ստորագրել հնարավոր չէ:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն ընդգծում է, որ վարույթի շրջանակներում հավաքված ապացույցների հիման վրա հնարավոր է եզրակացնել Ա.Աղաբաբյանի և Ս.Ա.-ի միջև լարված, ոչ բարիդրացիական հարաբերությունների մասին՝ պայմանավորված Ս.Ա.-ի քաղաքական հայացքներով, հրապարակային կերպով, այդ թվում՝ սոցիալական ցանցերում դրանք ներկայացնելու հանգամանքով, մարզպետարան վերջինիս այցելությամբ և նրա ուշացումներով ու բացակայություններով:

Այնուամենայնիվ, նշված հանգամանքները բավարար չեն 2024 թվականի հունիսի 19-ին Ա.Աղաբաբյանի վարքագծի, մասնավորապես՝ նրա կողմից բռնություն գործադրելու հանգամանքի վերաբերյալ եզրակացություն կատարելու համար:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեին Ա.Աղաբաբյանի կողմից 2024 թվականի հունիսի 19-ին Ս.Ա.-ի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Ա.Աղաբաբյանի կողմից բռնություն գործադրելու հանգամանքն ապացուցված չէ, ուստի վարքագծի կանոնների խախտումը բացակայում է:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի կողմից վարքագծի կանոնների խախտման բացակայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Արսեն Աղաբաբյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ